

Կապուտ ախպուրը (տասնիս զրույցներից)

Վասայ, դու չգիտե՞ս մեր Կապուտ ախպրի տեղը: Հիմի ես քեզ կասեմ: Ուրեմն՝ Կոշ գյուղը գիտե՞ս, էն որ Թալինի, Գյումրվա ճամփին ա, հա, հենց էդ Կոշ գյուղի միջով կրթեքվես աջ, ուղիղ կեթաս դեպի Ալագյազ: Կոշա վանքը կանցնես, Կոշա բերդը կանցնես, կմտնես ձորը, ձորով կեթաս: Հա, թե գարուն վախտ կեթաս, ճամփեն ծաղիկ-ծաղկունքով ա, շուշան-սմբուլով ա, թռչունների երգ ու տաղով ա, ճամփեն ընենց կանցնես, խաբար չես էղնի: Թե ամառ վախտով կեթաս, ճամփեն քար ու քոս ա, փուշ ու տատասկ ա, օձ ու կարիճ ա: Մանավանդ, էն Յոթ դռնանի գաղի (քարանձավ) մոտ շաաաատ զգուշ կեթաս, զաղեն լիքը օձ կա: Ձորով կեթաս-կեթաս, ձախի վրա իրար կողքի մի քանի պատիկ զաղեք կան: Կմտնես էդ զաղեքը, տես, իմացի, որ մի քառասուն պորտ առաջ, էդտեղ հայ ա ապրե: Չաղա, էն էլ՝ ինչ զաղա, պատերը տաշած, սվաղած, հա, բա ո՞նց, սվաղած, զաղի մեջտեղում էլ թունդիրը, ճիշտ ա, հողով հիմի լցրած ա, բայց էդ հողը, թե հանվի, մաքրվի, թունդիրում էսօր էլ կարաս լավաշ թխես, հա, հա, բալա ջան, էսօր էլ կարաս կրակ անես, լավաշ թխես: Չաղեքը տեսա՞ր, դե, գնա առաջ: Քիչ էլ, որ կեթաս, Կուզ մամեի քարը կտենաս: Ի՞նչ ասեմ, բալա, Կուզ մամեն մեենե՞ծ քար ա, հեռվից նայես, կասես՝ կռացած, մեջքին կուզ դրած պառավ ա, ժողովուրդն էլ էդ նմանությամբ քարի անունը դրել ա Կուզ մամե: Է՛, բալա, մեր վախտով, որ ջահել տղու սիրտը աղջկա վրեն ճղփար, աղջկան կկանչեր Կուզ մամեի մոտ՝ թաքուն խոսալու: Մեր գյուղի սաղ ջահելների գաղտնիքները Կուզ մամեն գիտեր, ու էդ գաղտնիքները իրա մեջ կպահեր, մարդ չէր իմանա: Հե՛յ գիղի, հունձ անելուց, կեսօրվա ճաշի ժամին, ինչքա՞ն ենք նստե Կուզ մամեի հովին, մածնաբրդոշ կերե, հետո երգերի շարան սկսե, գյուղնդ բռնե: Գյուղնդի գլխի միշտ Նազիկն էր, շատ սիրուն էր Նազիկը, շա՛տ, շիմշատ բոյ ուներ, լուսե՛ աչք-ունք, էրկու հուսերը կիջնեին մինչև կրունկները, Դավոն ի՞նչ աներ, ո՞նց դիմանար, որ չսիրահարվեր, Նազիկի սիրուց չխելեր: Չէ, բալա, ես Կուզ մամեի մոտ սեր-սեր չեմ խաղացե, բայց իմ պսիկ քուր խաղացել ա, իրա մուրազին էլ հասել ա:

*** Հենց հասար Կուզ մամեին, մեր գյուղը կերևա: Հաա-հա, Արագածոտնի Ավան գյուղը, ուր արդեն իրեք պորտ ա, որ մշեցիներ ու գվարսեցիներ են ապրում, մի երկու դաշտադեմցի ընտանիք էլ կան: Քիչ էլ կեթաս, բայց գյուղ չես մտնի, ձախի վրա մի կանաչ, ծաղկավոր իզ կտենաս, իզը կբռնես ու կեթաս, իզը քեզ կտանի, կհասցնի մեր Կապուտ ախպրին: Պահ, պահ, պահ, հըլա ասա՛՛ Կապուտ ախպուր: Չէ՛, աշխարհի վրա էլ ուրիշ տեղ չկա Կապուտ ախպուր, չկա ըտենց սառը, համով, անմահական ջուր, որ համ էլ հիվանդի դեղ ու բալասան ա, ծարավ, կարոտ, սիրող սրտի հովանք ա, աշուղների երգ ու տաղի ախպուր ա: Բլթբլթալով ջուրը կելնի գետնի տակից, քարերի արանքով կթափվի իրա բացած գուռը: Ձմեռվա ցրտին, որ չորս բոլորը ձունը ծածկի, քարերից սառցի լուլեքը կկախվեն, ջրի համար հե՛չ, էլի բխկալով գետնից դուս կգա: Ամառը, որ արտ ու արոտ արևից կխանձվեն, կվառեն-կթափեն, չորս բոլորը կամայանա, կծածկվի փուշ ու տատասկով, Կապուտ ախպրի չորս բոլորը թավիշ կանաչ կմնա, ծաղիկ-ծաղկունք կմնա, հազար գույնի թիթեռ կխաղա էդ ծաղիկ-ծաղկունքի մեջ: Հա, էն կեսօրվա շոգին իմ ափոյի կնիկ Սալբին իրանց կտուրից ձեն կտար՝ ախչի, Արեգնազ, ափող ասում ա՛ մի էս կուժը տար խփի Կապուտ ախպրի գլխին, արի, ծարավ մեռանք: Ես ափոյիս կնկա ձեռից վերցնում էի ջրի կուժը, ոտաբոբիկ վազում Կապուտ ախպուր: Կուժը դնում էի ախպրի ակի տակ, որ լա՛վ սառի, ես մտնում էի ջուրը, ձեռքերս սեղմած, սկսում էի հաշվել՝ մեկ, երկու, իրեք, չորս, հինգ... Մինչև տասը դիմանում էի սառը ջրի մեջ ու դուրս թռնում, բայց իմ

դասարանցի Վարսուն ու Նոյեմը յոթից էին դուրս թռնում, տասին չէին հասնում: Բա, էդ սառը ջրին դիմանալ կլինի՞: Ախպրից տուն կգայի, իմ Շուշան մերը հենց կնայեր ճաքճքած ոտերիս, կբարկանար, թե՛ ախչի, դու էլի՞ ես մտել Կապուտ աղբրի սառը ջրերը: Իմ մեր Շուշանն ասում էր՝ Էս Կապուտ աղբրի անունը գվարսեցիներն են իրանց հետ երգրից բերել, էնտեղ էլ ճիշտ սրա նման ախպուր ա եղել իրանց գյուղի տակը, անունն էլ՝ Կապուտ ախպուր, բայց էն Կապուտ ախպուրը խռովեց, դարդից չորացավ, ցամաքեց: Հիմի ասեմ, թե ինչի:

Թուրքերը կլցվեն Գվարս, կեթան գյուղի ռեսի՛ իմ ափո Կարոյի մոտ, թե մեզի էսքան զինվորացու էլի պիտի տաս: Ափոս կասի՝ գեղը զինվորացու չի մնացել, էն մատղաշ տղեքին էլ տարել եք, թուրքերը, թե՛ չէ, Կարո, խաբար ենք առե, որ դու քո գեղի տղեքին աղջկա շոր կհագցնես, կպահես մեր աչքից, գեղիդ սաղ աղջկերքին բեր, շարի մեր դեմ, ստուգենք: Ափո Կարոս կհասկանա սրանց մտքինը, նշան կանի պուճուր ախպորը, էս թուրքերին հենց օթախի մեջ կսպանեն, գիշերը կհանեն, կտանեն բախչի գլխին կհորեն, որ մարդ չիմանա: Ի՞նչ մարդ չիմանա, տան քուրդ հոտաղը՝ լալ ու կյառ Հասուն, կտենա, կեթա Մուշ, խաբարը կհասցնի թուրքի գլխավորին: Էրկու օր հետո, թուրքի գլխավորը զորքով կգա Գվարս, հանել կտա սպանված թուրքերի լեշերը, իմ ափո Կարոյին ու գեղի էլի էրկու տղամարդու մորթել կտա հենց Կապուտ ախպրի ջրի վրեն, արունները կխառնվի ախպրի ջրին, կեթա, կեթա, թուրքն էլ կկռանա, իրա արնոտ ձեռները կլվա ախպրի ջրով: Խեղճ Կապուտ ախպուր, էլ ո՞նց կդիմանար, դարդից ներս քաշեց իրա ջրերը, աշխարհից խռովեց, ցամաքեց, գնաց, կորավ: Իմ հեր Ռուբենին, որ սովորել էր Մշո ս. Կարապետ վանքի ճեմարանում, Էջմիածնի կաթողիկոսի հրամանով, հանձնարարեցին՝ մեր գյուղ Ավանում դպրոց բացի, գաղթական էրեխեքին տառաճանաչ դարձնի, 1937 թվին, սրտամեռ Ստալինի հրամանով գնդակահարեցին: Գյուղում սկսեցին քչփչալ, թե Ռուբենի կնկան՝ Շուշանին ու իրա վեցը էրեխեքին, կաքտրեն Սիբիր: Էդ էլ ասեմ, թե ինչի՞ գնդակահարեցին: Մորս ու մեր ափո Կարոյի պատմելով, հերս Աշտարակում, թե Էրևանում պլենումի անդամ էր: Էդ վախտ էլ ոսի քաղաքում որոշում են, որ Մասկվայից Էկոդ պոեզը Էրևան հասնի Բաքվով: Էն մեր վախտվա Հայաստանի թագավոր Աղասի Խանջյանն էլ դեմ ա կայնում, թե՛ չէ, թող պոեզը Թիֆլիսով գա, մենք Բաքուն չենք ուզում: Հերս էլ միանում ա մեր թագավորի խոսքին ու ինքն էլ ա դեմ ձեռ քաշում էդ գրին: Ո՞նց թե, ասում ա սրտամեռ Ստալինն ու թուրթ ա գրում, որ Աղասի Խանջյանի հետ հորս էլ, որպես դավաճանի գնդակահարեն: Բա, հորս տարան, գնդակահարեցին, մեզ էլ ուզում էին քշել Սիբիր: Մերս հենց էդ լսեց, մոմ ճարեց, մեզ էլ գցեց առաջն ու էդ ձմեռվա բուք-բորանին, գնացինք Կապուտ ախպուր: Ամեն մեկիս ձեռը մի-մի մոմ տվեց, վառեցինք, կացրեցինք Կապուտ ախպրի մեծ քարին: Մերս խնդրանք-աղաչանք արեց, որ Կապուտ ախպուրը պահապան դառնա, իրա վեց մանդր հացակերներին չաքտրեն Սիբիր: Մորս աղաչանքը տեղ հասավ, մեզ Սիբիր չաքտրեցին, ու էդ օրվանից, մերս ամեն տարի, մինչև մեռնելը, ձունը կտրում, հասնում էր, Կապուտ ախպրի քարին մոմ վառում: Բա, բալա, Կապուտ ախպուրը զորավոր ա, մեռնեմ իրա զորությանը:

Դե, գնացեք, իմ ասած ճամփով գնացեք: Հետներդ, չմոռանաք, մոմ կտանեք, կվառեք, ջուր կլիմեք, մուրազ կպահեք, կգաք:

Կապուտ ախպուրը թող տա ձեր մուրազ:

Մ. ՊԵՏՏՐՈՍՅԱՆՑ